ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՍՅԱՆ 26 / 7 ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

## ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ

Սույն աշխատանքային նախագիծը մշակվել է Արարատի մարզպետարանի պատվերով՝ մարզպետարանի և «Տեխշին» ՍՊԸ միջև կնքված պայմանագրի և Վեդիի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայն:

Համաձայն պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքի, մեր կողմից ուսումնասիրվել է Վեդի քաղաքի Կասյան 26 / 7 շենքի տանիքի փաստացի վիճակը:

Համաձայն պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքի, աշխատանքային նախագծով մշակվել է հետևյալը.

- Վեդի քաղաքի Կասյան 26 / 7 շենքի տանիքի փայտե կոնստրուկցիաների և տանիքածածկույթի քանդման ու վերանորոգման աշխատանքներ՝ նոր փայտանյութով և նոր տանիքածածկույթով:

Հարկ է նշել, որ ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ վերը նշված տանիքի փայտե կոնստրուկցիաները մասամբ քայքայված են, բացակայում են հակահրդեհային և հականեխիչ ծածկույթները: Փայտե կոնստրուկցիաների միջև հեռավորությունները և անհրաժեշտ քանակը (կանգնակներ, թեքաններ, ծպեղնատաքեր, կավարամած և այլն) տեղադրված է տանիքածածկույթի իրականացման շին. նորմերին և կանոններին անհամապատասխան: Գոյություն ունեցող փայտյա կոնստրուկցիաները ուղղանկյուն և անկանոն կտրվածքի են, հիմնականում ոչ փշատերև անտառանյութից:

Երկարատև շահագործման հետևանքով կան փայտե կոնստրուկցիաներ որոնք կորցրել են իրենց պիտանելիությունը: Կավարամածը իրականացված է 100x25 չափերով տախտակներց՝ 600-800 մմ միջտախտակային հեռավորությամբ: Տանիքածածկույթը ազբոհերձաքարից է, մասամբ քայքայված, մասամբ էլ ջարդված: Ձեղնահարկում բացակայում է անհրաժեշտ հաստության և մակերեսի խարամի շերտը: Նախագծով նախատեսված է փայտե կոնստրուկցիաների փոխարինում նոր փայտանյութով, հականեխիչ և հակահրդեհային միջոցառումների իրականացում, նոր տանիքածածկույթի տեղադրում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից ŭ = 0.55մմ, ինչպես նաև ջրհավաք ճոռերի, ջրընդունիչ ձագարների և ջրթող խողովակների տեղադրում: Հարկ է նշել, որ նոր տանիքածածկույթն իրականացնելիս գոյություն ունեցող փայտանյութից կառանձնացվի պիտանի փայտե կոնստրուկցիաներ, որոնք կենթարկվեն համապատասխան մշակման և կօգտագործվեն որպես կանգնակ, հորիզոնական կապ և ծայրակցորդ:

Նախագծում ներկայացված են լուսանկարներ գոյություն ունեցող տանիքի փաստացի վիճակի վերաբերյալ:

Տանիքի ապամոնտաժումը սկսելուց առաջ անհրաժեշտ է տարանջատել անվտանգության գոտիները, բացառել կողմնակի անձանց մուտքը շին. հրապարակի տարածք, ամբողջությամբ հոսանքազրկել շին. հրապարակի տարածքի բոլոր էլեկտրական գծերը, ապամոնտաժման աշխատանքներում ներգրավված բոլոր անձանց անցկացնել անվտանգության կանոնների դասընթաց:

Շինարարական աշխատանքներն իրականացնել լիցենզավորված կազմակերպությունների միջոցով:

- Պահանջվող լիցենզիա՝ բնակելի, հասարակական և արտադրական:
- Պահանջվող մեքենա մեխանիզմներ՝ ավտոկռունկ 1 հատ, բեռնատար մեքենա 1 հատ:

Օգտագործվող շինարարական նյութերին ներկայացվող պահանջներ՝ երաշխիքային ժամկետ 10 տարի:

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՍՅԱՆ 26 / 7 ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ԳԻՐՔ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ, ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՎԱԼՆԵՐ





«ՏԵԽՇԻՆ» ՍՊԸ
2015Թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՍՅԱՆ 26 / 7 ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ԳԻՐՔ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ, ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՎԱԼՆԵՐ

ՏՆՕՐԵՆ՝ Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ն.Գ.Ճ.՝ Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝
ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

«ՏԵԽՇԻՆ» ՍՊԸ
2015Թ.